ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/66 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

ԳՆԱՀԱՏՈՂ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **<<09>> <<08>> 2018թ.**

Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Վ. Հարությունյան՝ ԱԻ նախարարի օգնական

Անդամներ ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ

Մ. Դավթյան - ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետ.

Ա.Մարտիրոսյան- ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ գնդապետ.

Անդամներ ՝ ԳՊ/ԲԱ –բացող անձնակազմ

Ա.Մկոյան՝ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ:

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա.Մարգարյան՝ ԱԻՆ աշխատակազմի շենքերի,շինությունների պահպանման և տնտեսական վարչության փորձագետ:

Բացակայում էր ՝

Վ. Դադոյան ՝ ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ:

1. **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/66** ծածկագրով ընթացակարգի գնային առաջարկների ներկայացման մասին.

1.1. Ընթացակարգին մասնակցելու հրավերը ուղարկվել է էլեկտրանային գնումների կայքում՝ armeps.am և օրենքով սահմանված կարգով հրավերը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

1.2.Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են էլեկտրոնային եղանակով.

1.3 **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/66** ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահը հայտարարեց ձեռքբերվող ապրանքների նախահաշվային գները մեկ թվով արտահայտված՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գումարը/ՀՀ դրամ/
1.	Բենզին, պրեմիում (կտրոններ)	8 739 720
2.	Բիովառելիք / <<Ad Blue>> հեղուկ/	600 000

1.4. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N N	Մասնակցի անվանումը	Հասցեն
1.	Կամազ Արմենիա ՓԲԸ	ք. Երևան, Արտաշատի խճուղի, 2/4 2
2.	Սիֆիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1
3.	Ֆլեշ ՍՊԸ	ք. Երևան, Ե.Կողբացի 30
4.	Մաքս Օիլ ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների փող., 8 շենք, տարածք 1/1

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

2. Տվյալներ՝ ծրարները կազմելու, ներկայացնելու և սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

3. Տվյալներ՝ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/66** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցները ներկայացրել են մասնակցության դիմում, գնային առաջարկ և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

4. Մասնակիցների առաջարկած գները՝**ներառյալ ԱԱՀ:**

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Կամազ Արմենիա ՓԲԸ	Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ	Ֆլեշ ՍՊԸ	Մաքս Օիլ ՍՊԸ
1	Բենզին, պրեմիում (կտրոններ)	-	**8 302 734**	8 382 186	8 394 103.8
2	Բիովառելիք / <<Ad Blue>> հեղուկ/	720 000	-	-	-

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

5. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության **04.05.2017թ** 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/66** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ << Սիփիէս Օիլ Քորփորեյշն >> ՍՊԸ –ին:

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

6.Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված **mes.gnumner@yandex.ru** էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի **6-րդ հավելվածով** նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն **հավելված N 6.1**-ի:

6.1 **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/66** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած << Սիփիէս Օիլ Քորփորեյշն >> ՍՊԸ **-ն** ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված **mes.gnumner@yandex.ru** էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝ <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային

արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

6. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության **04.05.2017թ** 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ. պարբերության **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/66** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հանձնաժողովի նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով հրավիրել ոչ գնային պայմանները բավարար գնահատված մասնակցին միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա **13.08.2018թ. ժամը 11:30**-ին Արտակարգ իրավիճակների նախարարության վարչական 2-րդ մասնաշենքի 3-րդ հարկում Ք.երևան Դավիթաշեն 4 ,Ա.Միկոյան 109/8 հասցում:

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

7. ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/66 ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ Կառավարության **04.05.2017թ** 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Կողմ՝ 4 Դեմ՝ 0

8.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Վ. Հարությունյան

Անդամներ ՝ ԳՊ/ԲԱ –բացող անձնակազմ

Ա. Մկոյան

Անդամներ ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ

Մ. Դավթյան

Ա.Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա.Մարգարյան